Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ **Գավառի N 5 հիմնական**

Թեմա՝ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Վերապատրաստող, մենթոր՝ Գոհար Շահինյան

Ուսուցիչ՝ Աստղիկ Բոստանչյան

Գավառ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն. 3
2. Գրական ակնարկ. 5
3. Գլուխ 1. Սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնահարցեր . հայրենասիրության՝ որպես հիմնարար արժեքի ձևավորումը գրականության դասերին. 7
4. Գլուխ 2. Բարոյական արժեքների ձևավորումը գրականության դասերին. 12
5. Գլուխ 3. Հոգևոր և գեղագիտական դաստիարակությունը գրականության դասերին. 14
6. Եզրակացություն. 16
7. Օգտագործված գրականության ցանկ. 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մարդ գործունեություն ծավալելուց առաջ սահմանում է նպատակ,ըստ որի ընկալում է իրեն շրջապատող աշխարհը: Նպատակ սահմանելիս մարդը որոշում է, թե ինչն է իր համար կարևոր: Մարդու համար կարևոր է այն, ինչ արժեք ունի, ինչի համար արժե պայքարել: Իսկ ի՞նչ է արժեքը: Դա երևույթ է, որը հեշտությամբ ձեռք չի բերվում, և որի դիմաց որոշակի գին ենք վճարում: Հաճախ ստիպված ենք լինում մի արժեքի դիմաց մի այլ արժեք վճարել: Օրինակ՝ ազատության բարձրագույն արժեքի դիմաց հաճախ մարդը վճարում է իր կյանքով, որը նույնպես բարձրագույն արժեք է: Առանց արժեքների կյանքը գին չունի:Արժեքները գալիս են պատմության խորքերից ու մեր կենսափորձից, ծնվում են մարդկային համակեցության կանոններից՝ ձևավորելով արժեհամակարգ:Արժեհամակարգը մարդու իմացական, էթնիկական, հոգևոր-մշակութային, բարոյական և գեղագիտական արժեքների այն համախումբն է, որտեղ բոլոր արժենքները սերտորեն փոխկապակցված են իրար և կարևոր դեր ունեն ներդաշնակ, զարգացած ու ստեղծագործ անհատ ձևավորելու համար: Այս նպատակով հանրակրթական

դպրոցում գիտելիքներ տալուն զուգընթաց սովորողների մոտ պետք է ձևավորել ճիշտ արժեհամակարգ:

Խորապես համոզված ենք, որ արժեհամակարգի ձևավորումը պետք է իրականացվի բոլոր ուսումնական առարկաների դասաժամերին և բոլոր ուսուցիչների ջանքերով, սակայն այդ գործընթացում առանձնապես կարևորվում է հայոց լեզվի և գրականության ուսուցչի դերը:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝

ներկայացնել սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման կարևորությունը և դրան հասնելու ուղիներն ու միջոցները գրականության դասավանդման ընթացքում

Հետազոտության խնդիրները՝

- ուսումնասիրել թեմային վերաբերող գիտական գրականությունը և ներկայացնել արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը

- պազաբանել հանրակրթական դպրոցում արժեհամակարգի ձևավորման նշանակությունն ու կարևորությունը սովորողնորի համար
- բացահայտել հայրենասիրական, բարոյական, հոգևոր և գեղագիտական արժեքների ձևավորման մեթոդներն ու միջոցները գրականության դասաժամերին՝ դասավանդման սեփական փորձից ելնելով

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արժեքների, արժեհամակարգի հիմնախնդիրը քննարկվել է տարբեր գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի, մանկավարժության շրջանակներում, տրվել են հարյուրավոր սահմանումներ խնդրի դիտարկման տարբեր տեսանկյուններից: Այսպես՝ «Փիլիսոփայական բառարան»-ում «արժեքներ» հասկացությունը բացատրվում է որպես «շրջապատող աշխարհի օբյեկտների հատուկ սոցիալական որոշարկումներ, որոնք բացահայտում են նրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար (հասարակական կյանքի կամ բնության երևույթների մեջ պարունակվող բարիքը, բարին և չարը, գեղեցիկը և այլանդակը): Արտաքուստ Ա. հանդես է գալիս որպես առարկայի կամ երևույթի հատկություն, սակայն այն հատուկ է օբյեկտին ոչ թե ի բնե, ոչ թե պարզապես ինքնին վերցրած օբյեկտի ներքին կառուցվածքի շնորհիվ, այլ որքանով այդ օբյեկտը ներքաշված է մարդու հասարակական կեցության ոլորտի մեջ և դարձել է որոշակի սոցիալական հարաբերությունների կրող»[1]:

[1] Տես՝ փիլիսոփայական բառարան «Հայաստան» հրատարակչություն,Երևան – 1975, էջ 41

Անձի արժեքային համակարգի ձևավորման խնդրին անդրադարձել են հայտնի գիտնականներ Վ. Աֆանասևը, Գ. Անդրեևան, Մ. Վեբերը, Ն. Ժուրավլևան, Ա. Մուդրիկը, Ա. Պետրովսկին, Դ. Լեոնտևը, Գ. Տարդը, Լ. Կոլբերգը և շատ ուրիշներ: Արժանավայել ապրելու արվեստի մասին է գրել 16-րդ դարի ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա և լուսավորիչ Միշել Մոնտենը իր հայտնի «Փորձեր» գրքում. «. . . Բնատուր էությամբ իրեն արժանավայել դրսևորելու կարողությունը նշան է կատարելության և համարյա աստվածային արժանիք է . . . »[2]:

Հայոց դպրոցում աճող սերնդի արժեհամակարգի ձևավորմանն են անդրադարձել նաև հայ նշանավոր մտավորականները՝ սկսած Խորենացուց ու Շիրակացուց մինչև Աբովյան ու Նալբանդյան, Թումանյան ու Աղայան: Նրանք ոչ միայն իրենց հանրահայտ ստեղծագործություններում, այլև հայրենանվեր գործունեությամբ կարևորել են մտավոր, գեղագիտական, աշխատանքային, բարոյական ու հայրենասիրական դաստիարակությունը:

Համեմատելով ու խմբավորելով արժեքների մասին մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները՝ Ն. Զեյնալյանը արժեքների մասին պատկերացումները ներկայացնում է հինգ խմբով. «արժեքը՝ որպես պատկերացում,դիրքորոշում,արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք»[3]:

Հաշվի առնելով արժեհամակարգի ձևավորման խիստ կարևորությունը անհատի ներդաշնակ զարգացման և հասարակական կյանքի առաջընթացի ապահովման համար՝ ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում ևս այն ներառված է որպես հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակային բաղադրիչ, որը նպատակաուղղված է սովորողների «մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը» (ՀՊՉ, բաժին VI):

---

[2] Տես՝ Մ. Մոնտեն, Արժանավայել ապրելու արվեստի մասին: Փիլիսոփայական ակնարկներ, «Արևիկ» հրատարակչություն, 1989, էջ 4

[3] Տես՝ Զեյնալյան Ն. Ա. , Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն», Երևան, 3-4/2017, էջ 8

ԳԼՈՒԽ 1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՍԱՍԵՐԻՆ

Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Այդ գործոններն են ընտանիքը, դպրոցը, փողոցը, հասարակությունը, շրջապատի սոցիալական արժեքները, տարիքային առանձնահատկությունները: Ժամանակաշրջանը և անընդհատ փոփոխվող աշխարհը իրենց կնիքն են թողնում անհատի արժեքային համակարգի ձևավորման վրա:

Այլ են այսօրվա դպրոցական ուսուցման և դաստիարակության չափանիշները և չեն տեղավորվում գիտելիքների և իմացությունների նախկին սահմաններում: Գիտության զարգացման շնորհիվ ստեղծվել ու ստեղծվում են զանազան խելացի սարքեր՝ համակարգիչներ, սմարթֆոններ, պլանշետներ, որոնք շատ բան են փոխել աշակերտի կյանքում: Այսօրվա դեռահասը, որի բնավորության ու անհատականության հիմնական գծերը ձևավորվում են նախ և առաջ ընտանիքում, ավելի շատ շփվում է հեռախոսի ու համակարգչի հետ, քան ծնողների ու հարազատների: Ընտանեկան դաստիարակությունը մնում է թերի, դառնում ոչ

լիարժեք: Խաթարվում է արժեհամակարգի ձևավորումը, և վտանգվում է երեխայի ապագան: Ահա կյանքի այս խառնաշփոթում շատ է կարևորվում ազգային դպրոցի և ուսուցչի դերը: Կյանքի թոհուբոհում երեխային այլասերումից պաշտպանելու և վաղվա պիտանի ու կարևոր քաղաքացին ունենալու համար անհրաժեշտ է դպրոցում բոլոր առարկայական դասաժամերին հաղորդած գիտելիքները ինտեգրել դաստիարակությանը, նպատակաուղղել արժեհամակարգի ձևավորմանը և արդյունավետ ուղիներ գտնել դրա իրականացման համար: Մարդիկ և սերունդները պետք է հաղորդակցվեն իրար հետ մտավոր և հոգևոր արժեքների հիման վրա և ոչ թե փողոցից սերված բարքերի ազդեցության ներքո: Առանց մտավոր ու հոգևոր հարստության չեն ծնվի բարձրարժեք արվեստ, գիտություն, արդյունաբերություն, զարգացած տնտեսություն, պաշտպանական հզոր միջոցներ:

7

Ուսուցիչը պետք է գտնի ուսուցման կազմակերպման այնպիսի ձևեր ու մեթոդներ, որոնք ծրագրային գիտելիքներ հաղորդելուց բացի դաստիարակեն և խթանեն արժեքային համակարգի ձևավորումը: Կրթական գործընթացում նախ և առաջ խիստ կարևորվում են ուսուցչի անձնային և մասնագիտական որակները, ընդ որում սովորողները հաճախ անձնային որակներն ավելի են նախընտրում, քան մասնագիտականը: Սիրելի ուսուցչի դիրքորոշումները, աշխարհայացքը, արժեհամակարգը, ճաշակը, վարքագիծը դառնում են աշակերտի անձի ձևավորման որոշիչ գործոն: Այս տեսակետից առանձնապես մեծ է մայրենի լեզվի և գրականության ուսուցչի դերն ու նշանակությունը. չէ՞ որ նա է հայոց քերթության ջահակիրը, իր գործի հավատավորն ու նվիրյալը, ուստի նրա առաջին մուտքը դասարան, առաջին բառն ու դասը, անգամ առաջին ժպիտը պիտի լինեն հայեցի: Նա կրթական կարևորագույն խնդիրներ լուծելիս որպես ելակետ պետք է ունենա ազգային շահերն ու ազգային մտածողությունը՝ դրանք վարպետորեն միահյուսելով համամարդկային գաղափարներին: Նա պետք է սովորողների մեջ ամրապնդի այն համոզմունքը, որ հայը չպետք է հեռանա հայեցի լեզվամտածողությունից և դարերով ամրագրված բարոյական արժեքներից, այլապես կվերածվի անհայրենիք բիոզանգվածի և պատմական հիշողությունից զուրկ մանկուրտի:

Հայտնի է, որ հայ բանաստեղծներն ու գրողները՝ որպես ժողովրդի լավագույն զավակներ, միշտ էլ աչքի են ընկել բարձր քաղաքացիությամբ, տոգորված են եղել ազգային արժանապատվությամբ, հպարտությամբ ու սիրով հարազատ ժողովրդի, նրա լեզվի ու մշակույթի, հայրենի եզերքի ու ազգային սովորույթների նկատմամբ: Ուստի շատ եմ կարևորում նշանավոր գրողների կենսագրությունների ուսուցանումը: Կարծում եմ, որ սովորողների արժեհամակարգի հարստացման նյութ կարող են ծառայել նրանց առաջադեմ հայացքները, հայրենանվեր ու մարդասիրական գործունեությունը, նրանց խառնվածքի ու բնավորության առանձնահատուկ գծերը: Օրինակ՝ Ավ. Իսահակյանի կենսագրությունը ուսուցանելիս աշակերտներին տեղեկացնում եմ, որ նա ոչ միայն մեծ բանաստեղծ էր, այլև մեծ հայրենասեր ու մեծ հայ: Մեջբերում եմ սրտի խոր կսկիծով ասված նրա խոսքը. «Մեռնեի՝ Սևանը ցամաքած չտեսնեի, ապրեի՝ Արարատը մերը տեսնեի. . . »:

8

Պատմում եմ նաև, թե ինչպես մեծ բանաստեղծը գործուն մասնակցություն է ունեցել «Նեմեսիս» գործողության նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներին: Նա Սողոմոն Թեհլերյանի հետ մի քանի օր Բեռլինում հետևել է Թալեաթ փաշային և պատրաստ է եղել նրան սպանելու, եթե հանկարծ Թեհլերյանը ձախողվեր: Նա նաև մեծ դեր է ունեցել Թեհլերյանի արդարացման գործում : Հանճարեղ բանաստեղծի կյանքի այս կարևոր դրվագը շատ է ոգևորում սովորողներին և նրանց սրտերում բորբոքում հայրենասիրության կրակն ու պայքարի ոգին:

Արժեքային համակարգ ունեն ոչ միայն անհատ մարդիկ, այլև ժողովուրդներն ու պետությունները: Այն արժեքները, որոնք կազմում են տվյալ ազգի արժեհամակարգի առանցքը, կոչվում են առանցքային կամ հիմնարար արժեքներ: Ինչպես ամեն մի հասարակական երևույթ, այնպես էլ արժեհամակարգը փոփոխվում, զարգանում է. որոշ արժեքներ հնանում ու անհետանում են, որոշ արժեքներ նոր են ի հայտ գալիս, սակայն հիմնարար արժեքները, դարեդար պահպանվելով, ամրակայվում են ու հարատևում: Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ այդպիսի մնայուն ու շարունակական արժեք է սրբազան հայրենիքի ու պետականության պաշտամունքը, որը ձևավորվել է անհիշելի ժամանակներից և սերտորեն կապված է եղել մեր

հեթանոսական հավատի և հին աստվածների հետ: Դրա լավագույն ապացույցը վաղնջական ժամանակներից մեզ հասած «Վահագնի ծնունդը» առասպելն է, որն ուսուցանվում է 5-րդ դասարանում: Աշակերտներին բացատրում եմ, որ Վահագնը հին հայերի ամենասիրված աստվածներից էր, որի պաշտամունքը կատարվում էր ծիսական մեծ հանդիսություններով: Վահագնը ռազմի, քաջության, հաղթանակի, ամպրոպի և կայծակի աստվածն էր, որից թագավորներն ու զորավարները քաջություն և հաղթանակ էին աղերսում: Վիշապներին սպանող Վիշապաքաղ Վահագնը մեր նախնիների համար դարձել է ազատության, անկախության և հայրենասիրության բացարձակ արժեքները մարմնավորող աստված, որին պատմահայր Խորենացին նույնիսկ համարել է Տիգրան Երվանդյանի որդին:

Նախաքրիստոնեական ժամանակաշրջանի իշխող արժեհամակարգում հայրենիքի պաշտամունքի և ազգի ազատության կարևորագույն արժեքները

լավագույնս արտացոլվել են նաև մեր հնագույն մյուս առասպելներում, որոնք տեղ են գտել հիմնական դպրոցի գրականության դասագրքերում: Դրանք ուսումնասիրելիս կարևորում եմ այն հիմնադրույթը, որ մենք, լինելով «փոքր ածու», ունեցել ենք հերոս նախնիներ՝ Հայկ ու Տիգրան, Արա Գեղեցիկ և Արտաշես արքա, որոնք երբեք չեն ընկրկել թշնամիների առաջ, քաջության արժանի շատ գործեր են կատարել, քանի որ իրենց մեջ կրել են ազատության և անկախության գերագույն արժեքները:

Ազգային արժեհամակարգը նորովի դրսևորվեց քրիստոնեության դարաշրջանում, երբ որպես սուրբ արժեքներ հռչակվեցին հայրենիքը, հավատն ու լեզուն: Այդ կապակցությամբ նորից անդրադառնում եմ սուրբ Մեսրոպ Մաշտոցի կատարած ազգափրկիչ մեծ գործին՝ հայոց այբուբենի ստեղծմանը: Մեսրոպյան գիրը, որը ցայսօր բացարձակ արժեք է, եկավ փոխարինելու հայոց պետականությանը և ամրապնդեց ազգային ինքնագիտակցությունը:

Ահա այսպես՝ թեմա առ թեմա, մեր հերոս նախնիների օրինակով սովորողների արժեհամակարգում արմատավորում եմ հայրենասիրությունը՝ որպես դարերից եկած, զտված ու բյուրեղացած արժեք, որի համար հայրենիքի սիրասուն զավակները անգամ իրենց կյանքը չխնայեցին: Հայրենիքը սիրելու համար շատերը հռչակվեցին ժողովրդի թշնամի, բանտարկվեցին ու հալածվեցին, աքսորվեցին ու

գնդակահարվեցին: Իրենց օրինակով ու անմահ ստեղծագործություններով սերունդներ կրթեցին և արժեհամակարգ ձևավորեցին: Այդպես գրվեցին Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն և Թումանյանի «Հայրենիքիս հետ»-ը, Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի. . . »-ն և «Մահվան տեսիլ»-ը,Տերյանի «Երկիր Նաիրի»-ն ու Սևակի «Հայաստան»-ը, Շիրազի «Իմ սուրբ հայրենիք»-ն ու Սահյանի «Հայաստան ասելիս. . . »-ը: Այսօր էլ այդ հանճարեղ ստեղծագործությունները հայրենասիրության անմոռաց դասեր են տալիս: Այդ դասերին աշակերտները սովորում են, որ հայրենիքը ոչ միայն նրա հողն ու ջուրն է, այլև ժողովրդի լեզուն ու պատմությունը, մշակույթն ու ավանդույթները,որոնք հարկավոր է խորապես իմանալ և ճանաչել: Մեր մեծերը յուրահատուկ սիրով են սիրել «դառն ու անուշ» հայրենիքը, նրա «մեղմ ու բեկբեկ երգերը», «արքայական լեզուն», և հայրենիքի հետ են եղել հատկապես նրա ծանր օրերին: Նրանք երբեք չեն հուսահատվել և հավատով են նայել գալիքին: Այդ լավատեսությունը դարեդար փոխանցվել և հասել է մեզ:

Այսօր էլ, երբ վտանգված է հայրենիքի անկախությունն ու պետականությունը, մեր ժողովրդի լավագույն զավակները անվարան հայրենիքի զոհասեղանին են նվիրաբերում ամենաթանկագինը՝ իրենց կյանքը և այսօր էլի հավատում են հայրենիքի հավերժությանը: Նշանակում է՝ հայրենասիրության դասերը տվել են ցանկալի պտուղներ, և դրանում մեծ է գրականության դերը: Հայրենասիրական պոեզիայի գոհարները թափանցում են սովորողների հոգիները և նրանց կրթում ու դաստիարակում որպես հայասեր ու հայրենասեր քաղաքացիներ:

ԳԼՈՒԽ 2

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Արժեքները հասարակության կողմից ընդունված համընդհանուր նորմերն են, որոնցով մարդիկ կարգավորում են իրենց վարքագիծը: Ուստի արժեհամակարգի ձևավորման գործընթացում առաջնային են նաև սոցիալական, բարոյական արժեքները: Հասարակությունը պետք է կառուցված լինի այնպիսի բարոյական արժեքների վրա, ինչպիսիք են հանդուրժողականությունը, արդարամտությունը, աշխատասիրությունը, պարտքի ու պատասխանատվության զգացումը, խղճի և ամոթի զգացումը: Ինչ էլ լինի, մարդը պիտի իր մարդկային կերպարը պահպանի, պետք է պահպանվեն դարերից եկած մնայուն արժեքները՝ սիրո վրա հիմնված ընտանիքը, ծնող-երեխա հարաբերությունները, մեծերի հանդեպ խոնարհ հարգանքը: Հայի համար շատ թանկ են ընտանեկան, ազգակցական, արյունակցական կապերը, որոնք պետք է պահպանել: Այսօր, երբ տնտեսության շուկայական հարաբերություններում ավելի կարևորվում են ճարպկությունն ու անհավասար մրցակցությունը, իշխում են կեղծիքն ու խաբեությունը, ես աշխատում եմ սովորողներին զերծ պահել օգտապաշտական և նյութապաշտական հակումներից և նրանց կողմնորոշել դեպի բարոյական արժեքները: Այդ խնդրի լուծման

լավագույն հնարավորություն է տալիս Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը»-պատմվածքի ուսուցումը 7-րդ դասարանում: Պատմվածքի գլխավոր հերոսը Հաճի աղան է՝ մի անսիրտ ու եսասեր վաճառական, որի համար ավելի կարևոր ու արժեքավոր է իր ունեցվածքը, քան հարազատ քրոջ կյանքը: Ըստ աղայի՝ քույրը ավելորդ է, քանի որ անդամալույծ է, ուստի փախուստի օրը քրոջը հետը չի վերցնում: «Ավելորդը» պատմվածքը բարոյագիտական իրավիճակներ ստեղծելու մեծ հնարավորություն է տալիս: Բուռն բանավեճի թեմա է դառնում իմ կողմից առաջադրված այն հարցը, թե իրականում եղբայրը կարող էր զոհաբերել հարազատ քրոջ կյանքը իր ունեցվածքը փրկելու համար: Կարծիքները տարբեր են լինում, ամեն մեկը իր տեսակետն է հայտնում՝ ասածը հիմնավորելով ոչ միայն բնագրից բերված փաստերով, այլև կյանքից վերցված օրինակներով: Այնուհետև առաջադրում եմ հաջորդ հարցը. Հաճի աղայի նման անհոգի ու նյութապաշտ մարդու սրտում արդյոք կարո՞ղ էր մնալ մի մաքուր անկյուն, որտեղ արթնանար խիղճն ու զղջումը:

12

Աշակերտները բուռն քննարկումից հետո գալիս են այն եզրակացության, որ, այո՛, դա հնարավոր է, որ մարդու այդ տեսակը այսօր էլ կա, և նորից բերում են իրենց ծանոթ օրինակներ: Պատմվածքի վերջում գլխավոր հերոսը ենթարկվում է սեփական խղճի դատաստանին, երբ հասկանում է, որ աշխարհում ավելորդ մարդ չկա, Աստծո առաջ բոլորն էլ հավասար են՝ անկախ ունեցվածքից և առողջական վիճակից: Մարդն արժեք է: Մարդու ունեցած մեծագույն պարգևներից է խղճի և զղջման զգացումը, առանց որի դադարում է մարդ լինելուց և վերածվում է գազանի: Այդ գաղափարն է ընկած նաև Ակ. Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի հիմքում: Գլխավոր հերոսի կերպարը վերլուծելիս բացատրում եմ, որ սիրելի ձիուն չկորցնելու նպատակով Սիմոնը ակամա ոճիր է գործում կենդանու հանդեպ՝ չեչաքարով խոր վերք բացելով նրա մեջքին: Մարդը մեղանչում է խղճի դեմ, բայց հետո զղջում է արածի համար: Միևնույն է, Ցոլակին տանում են, բայց տանում են արյունոտ վերքով, որ բացել էր ինքը. «. . . ԵՎ մի միտք, ծանր բեռից դժվար ծանրությամբ, նստել էր նրա գլխում, և նա խոնարհել էր գլուխը: Բայց փակ աչքերով էլ տեսնում էր արնոտ չեչաքարը:

-Հենց իմ փիսությունը մնաց, Ցոլա՛կ. . . Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ես. . . Ցարաբ տեսնես արյունը ցամաքե՞ց. . . »[4] :

Սա խղճի ձայնն է, որը հաղթում է մարդուն, սա զղջման զգացումն է, որը պարտավոր է ունենալ բարձր ու առաքինի մարդը. սա մարդկային հոգեկերտվածքի ամենակարևոր ու մնայուն արժեքներից է, որը խոր արմատներ պետք է գցի սովորողների հոգիներում դեռևս դպրոցական վաղ տարիքից:

Եվ այսպես՝ գրական հերոսների կերպարների վերլուծության միջոցով աշակերտները կատարում են ինքնուրույն եզրահանգումներ՝ գրական տվյալ հերոսին ընդօրինակելով կամ մերժելով, նմանվելով կամ դատապարտելով և հոգու խորքում ամբարելով բարոյական մնայուն արժեքները՝ բարին, սերը, խիղճը, արդարությունը, ազնվությունը, առաքինությունը:

ԳԼՈՒԽ 3

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Ճիշտ արժեհամակարգի ձևավորման համար բարոյական արժեքներից ոչ պակաս կարևոր են նաև գեղագիտական արժեքները, որոնք հիմնված են անհատի ընկալումների վրա: Ա. Չեխովն ասում էր. « Մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի՝ և՛ դեմքը, և՛ հագուստը, և՛ հոգին, և՛ մտքերը»: ՈՒսուցիչների համար կարևոր և հաճելի առաքելություն է օգնել աշակերտներին հաճախ հայտնվելու գեղեցիկի աշխարհում, տեսնելու, զգալու գեղեցիկը, մասնակից լինելու գեղեցիկի արարմանը: Աշխարհի գեղագիտական ընկալման ճիշտ կողմնորոշումը սերտորեն կապված է մարդու հոգևոր և բարոյական դաստիարակության հետ: Մարդն այնքան ավելի գեղեցիկ է, որքան նրա մեջ կատարյալ է հոգևորը և ընդհակառակը: Ուստի երեխայի կյանքի մեջ պետք է ներառել գեղեցկությունը՝ որպես հոգևոր դաստիարակության միջոց: Այդ գործում գրականության ուսուցչին օգնության են հասնում արվեստի կարևորագույն տեսակները՝ երաժշտությունը,

[4] Տես՝ Ակ. Բակունց, Վ սիսկան մանուշակ, «Հայ սատան» հրատարակչություն, Երևան,1969,էջ 91

կերպարվեստը, կինոն ու թատրոնը, քանդակագործությունն ու ճարտարապետությունը: Գեղեցիկ դասական երաժշտությունը, ճարտարապետական հրաշալի կոթողն ու քանդակը, տպավորիչ գեղանկարը կամ լավ ֆիլմը ոչ միայն գեղագիտական ճաշակ են ձևավորում, այլև օգնում են սովորողներին ավելի լավ ընկալելու ուսումնասիրվող գրական ստեղծագործությունը: Օրինակ՝ Նարեկացու «Մեղեդի ծննդյան» տաղի ուսուցումը 9-րդ դասարանում թերի կլինի առանց հոգևոր երաժշտության:Տաղն ընթերցելիս սովորողները ունկնդրում են հենց իր՝ Նարեկացու «Հավուն-հավուն»-ը կամ «Տիրամայր»-ը: Դա օգնում է հաղորդակցվելու Բարձրյալի հետ, իրենց մեջ կրելու աստվածային լույսը: Նարեկացու տաղերը բազմերանգ են, շողշողում են գույների ողջ հմայքով: Դրանք շատ ընդհանրություններ ունեն միջնադարի հայ մանրանկարիչների նկարների հետ: ՈՒստի մեծ բանաստեղծի տաղերը ավելի խորը և պատկերավոր ընկալելու համար միաժամանակ սահիկաշարով ցուցադրում եմ միջնադարյան ծաղկողների՝ Սարգիս Պիծակի, Մոմիկի, Թորոս Ռոսլինի, Գրիգոր Ծաղկողի և այլոց նկարազարդ ձեռագրերն ու մանրանկարները: Սովորողները հասկանում են, որ տարբեր

արտահայտչամիջոցներով թե՛ բանաստեղծները, թե՛ նկարիչները և թե՛ երաժիշտներըմարդկային նույն հույզերի, ապրումների ու զգացումների թարգմանն են:

Գեղագիտական դաստիարակության հզոր միջոց են նաև թատրոնն ու կինոն,որոնց առնչվելը կախարդական մի աշխարհ է բացում աշակերտների առջև: ՈՒստի առիթը բաց չեմ թողնում նրանց հետ միասին դիտելու տիեզերական վարդապետի տաղերին նվիրված և բոլորովին վերջերս նկարահանված հոգևոր-երաժշտական հրաշալի ֆիլմը՝ «Տաղ . հոգու ճանապարհ», որը ձայնի, լույսի և գույնի մի փառահեղ համադրում է: Բնության չքնաղ տեսարանները, գեղեցիկ ասմունքը և հոգևոր մեղմ երաժշտությունը հարստացնում են երեխաների ներաշխարհը գեղեցիկի զգացողությամբ և հոգեկան մեծ բավականություն պատճառում:

Այո՛, գեղեցիկը ընկալել տալու միջոցով ձևավորվում է ճիշտ արժեհամակարգ: Գեղեցիկը մարդկանց միջից վանում է արատավոր երևույթները՝ նախանձն ու

չարությունը, սուտն ու կեղծիքը, ատելությունն ու պառակտումը, և նրանց հոգիները լցնում իմաստնությամբ, խաղաղությամբ, բարությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես ել Հայաստանում հասարակական - քաղաքական և սոցիալ – տնտեսականն կյանքի փոփոխվող պայմաններն ու պահանջները մեծ ազդեցություն են թողնում սովորողների արժեքային կողմնորոշման և արժեհամակարգի ձևավորման վրա: Այսօր հանրակրթական դպրոցը նպատակ ունի ձևավորել որոշակի կարողունակություններով զինված հայրենասեր քաղաքացի, որը կկարողանա դիմագրավել ցանկացած փոփոխության ու մարտահրավերների, կաշխատի ու կապրի հանուն երկրի պետականության ամրապնդման ու հայ ժողովրդի բարօրության: Այս նպատակի իրականացման գործում կարևորագույն նշանակություն ունի մայրենի լեզվի և գրականության դասավանդումը հայոց դպրոցում: Այդ առարկաների դասավանդման ընթացքում սովորողը գիտակցում է, որ հայ ժողովրդի համար ամենամեծ արժեքը հայոց լեզուն է՝ որպես անկախ պետականության գրավական և հայի

ինքնությունը բացահայտելու միջոց, և ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքը հայրենիքն է, որը պիտի ճանաչել ու սիրել, պաշտպանել ու պահպանել: Այս դիրքորոշումը մշակելու և ամրապնդելու համար հարկավոր է դասերն այնպես կազմակերպել, որ դրանցից յուրաքանչյուրի ընթացքում, բացի գրականագիտական ու լեզվական գիտելիքներ ստանալուց, աշակերտը հղկվի ու կայանա որպես մարդ – անհատ և իր երկրի լիիրավ քաղաքացի, պահի իր ազգային ոգին և արժևորի մշակույթը:

Այսօրվա աշակերտը վաղվա ուսուցիչն է, բժիշկը, գիտնականը, շինարարը, գյուղատնտեսը և, պարզապես, ընտանիքի հայրը կամ մայրը, ուստի անհրաժեշտ է գիտելիքների որոշակի ծավալ հաղորդելուց բացի սովորողների մեջ դաստիարակել հայրենասիրություն, աշխատասիրություն, ստեղծարարություն, բնապաշտություն, կամք ու գթասրտություն, ազնվություն ու արդարամտություն: Մարդկային այս բարձր որակների ձևավորմանը մեծապես նպաստում են գրական ընթերցանության դասերը, գրական կերպարների վերլուծությունները, միջառարկայական կապերի օգտագործումը, բնության գրկում կազմակերպված հայրենագիտական արշավներն ու էքսկուրսիաները, ուսուցման ճիշտ ընտրված մեթոդներն ու դերային խաղերը,որոնց շնորհիվ գրականության ուսուցիչը հասնում է իր նպատակադրումների իրականացմանը:

Թեման հետազոտելիս եկա այն եզրահանգման, որ արժեքային համակարգի ձևավորումը նպատակահարմար է իրականացնել նրա բոլոր բաղադրիչների (մտավոր, բարոյական, գեղագիտական, հոգևոր, ֆիզիկական, սեռական, սոցիալական, բնապահպանական, աշխատանքային և այլն) համադրման գործընթացում:Պարզեցի, որ, պատկանելով տարբեր տեսակների, արժեքները փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Այս երևույթը արժեբանության՝ արժեքների մասին գիտության մեջ կոչվում է արժեքների փոխլրացման օրենք: Այսպես, օրինակ, սեռային արժեքը կարող է լրացվել բարոյական արժեքով՝ սիրով, գեղագիտական արժեքը՝ հոգևոր արժեքներով. գեղագիտական արժեք ունեցող արվեստի ցանկացած գործ կարող է ներազդել մարդու ներաշխարհի վրա՝ առաջացնելով խորը ապրումներ ու հույզեր: Միմյանց շատ են փոխլրացնում հատկապես գեղեցիկի, բարու և ճշմարիտի արժեքները: Հավերժական արժեքների այս եռյակը իր մեջ կրողը համարվում է կիրթ ու

դաստիարակված մարդ: Մարդը կատարյալ է այնքանով, որքանով որ նրա մեջ նյութական ու հոգևոր արժեքները ներդաշնակորեն լրացնում են միմյանց: Իսկ որքան հասարակության մեջ շատ են նման մարդիկ, այնքան առողջ և համերաշխ է տվյալ հանրությունն ու ժողովուրդը:

Հետազոտության ընթացքում համոզվեցի, որ արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդրում առանձնահատուկ որոշիչ տեղ են գրավում հայրենասիրական, բարոյական, հոգևոր և գեղագիտական արժեքները, որոնց ձևավորումը սովորողների մոտ փորձում եմ իրականացնել իմ պարապած առարկաների դասաժամերին:

Իհարկե, արժեհամակարգի ձևավորումը մի օրվա և մի դասի խնդիր չէ: Այն պետք է արվի քայլ առ քայլ, փուլ առ փուլ, որպեսզի սովորողը ճիշտ ընկալի իրեն շրջապատող աշխարհը, զերծ մնա դեռահասի մարմինն ու հոգին խեղաթյուրող տեղեկություններից ու հետաքրքրություններից, համացանցի տեղեկատվական խելացնոր հորձանուտում անարդյունավետ ժամանակ չանցկացնի և չշեղվի իրական արժեքներից: Այս առիթով տեղին է հիշել մեծ բանաստեղծ Չարենցի խոսքերը.

17

Ինչքա՜ն է այս ամենը բարդ . . .

Այս ամենի հետ միասին՝

Մարդը էլի մնում է մարդ,

Որ ունի սեր, որ ունի սիրտ [5]. . .

Դասավանդման ընթացքում ավելի ու ավելի եմ համոզվում, որ գրական ստեղծագործությունները իրենց կնիքն են թողնում սովորողի բնավորության և անձնային որակների ձևավորման վրա: Ուստի ցանկացած ստեղծագործություն ուսումնասիրելիս կարևոր է ստեղծել գրական երկում ներկայացված բարոյագիտական իրավիճակներ և

[5] Տես՝ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968

գործող անձ դարձնել աշակերտին, որպեսզի նա կարողանա հասկանալ իրադրությունը, ապրումակցել հերոսներին, մերձավորի ցավը համարել իրենը, ապրել ուրիշների դժբախտությամբ, ուրախանալ ուրիշների ուրախությամբ և փորձել իրավիճակային լուծումներ առաջարկել: Դա զարգացնում է սովորողների ինքնաճանաչողությունը և ինքնագիտակցությունը, ինքնուրույն որոշումնոր կայացնելու կարողությունը և լավագույնս նախապատրաստում է նրանց հետագայում անձնական կյանքի ճիշտ ճանապարհ ընտրելուն:

Հայրենասիրական, բարոյական, հոգևոր և գեղագիտական ճիշտ արժեքներով դաստիարակված երեխան դառնում է հայրենասեր , օրինապահ, բարեկիրթ և ներդաշնակ զարգացած քաղաքացի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ (ՀՊՉ), Երևան, 2021
2. Փիլիսոփայական բառարան, «Հայաստան» հրատարակչություն,Երևան – 1975
3. Մ. Մոնտեն, Արժանավայել ապրելու արվեստի մասին: Փիլիսոփայական ակնարկներ, «Արևիկ» հրատարակչություն, 1989
4. Ձեյնալյան Ն. Ա. , Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն», Երևան, 3-4/2017

5. Ակ. Բակունց, Ալպիական մանուշակ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան,1969
6. Դ. Դեմիրճյան, Ավելորդը,Հատոր II, Հայակական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն,Երևան,1977
7. Գ. Նարեկացի Տաղեր, «Զվարթնոց»,1991
8. Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968